

«ՀԱԶԱՐԱՄՅԱԿԻ ՄԱՐՏԱՀՐԱՎԵՐ» ՀԻՄՆԱԳՐԱՄ ՀԱՅԱՍՏԱՆ» ՊՈԱԿ-Ի

ԳԼԽԱՎՈՐ ԳՈՐԾԱԳԻՐ ՏՆՕՐԵՆ՝

ԱՐԱ ՀՈՎՍԵՓՅԱՆԻՆ

ՊԱՏՃԵՆԸ՝

«ՀԱԶԱՐԱՄՅԱԿԻ ՄԱՐՏԱՀՐԱՎԵՐ» ՀԻՄՆԱԳՐԱՄ ՀԱՅԱՍՏԱՆ» ԾՐԱԳՐԻ՝

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԼԻԱԶՈՐ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉ,

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐ՝

ՆԵՐՍԵՍ ԵՐԻՑՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Հովսեփյան,

2010թ. ապրիլի 30-ին կայացավ ՀՄՀ-Հայաստան գրասենյակում ՀՄՀ-Հայաստան ծրագրի Շահառուների խորհրդի (ՇԽ) և Կառավարման խորհրդի քաղաքացիական հասարակության անդամների ընտրության Ընտրական հանձնաժողովի նիստ: Նիստին ներկա էին ՀՄՀ-Հայաստան ՊՈԱԿ-ի համակարգման ղեկավար Էսթեր Հակոբյանը, ՇԽ օգնական Վիկտորյա Գրիգորյանը հանձնաժողովի անդամներ Արտակ Սարիբեկյանը, Մարիաննա Եղիազարյանը, Տիգրան Շահինյանը, Վահագն Ասրյանը, Համազասպ Գանիբեկյանը, Մարիամ Օսիպյանը, Ամալյա Բալաբեկյանը, Անահիտ Հակոբյանը, Գայանե Գևորգյանը, Գայանե Արսենյանը, Խաչատուր Բարսեղյանը, Տաթևիկ Ավագյանը, Լիլիթ Քամայանը:

Օրակարգում ընդգրկված էին ընտրական հանձնաժողովի նախագահի ընտրության, ընտրական հանձնաժողովի քարտուղարի ընտրության, ընտրական հանձնաժողովի առաջիկա նիստի օրը նշանակելու հարցերը: Որպես ընտրական հանձնաժողովի նախագահի թեկնածուներ՝ առաջադրվեցին Վահագն Ասրյանի և Արտակ Սարիբեկյանի թեկնածությունները: Չայների մեծամասնությամբ ընտրական հանձնաժողովի նախագահ ընտրվեց Արտակ Սարիբեկյանը: Ընտրական հանձնաժողովի քարտուղարի պաշտոնում առաջադրվեցին Ամալյա Բալաբեկյանի, Գայանե Արսենյանի և Մարիաննա Եղիազարյանի թեկնածությունները: Գայանե Արսենյանը հայտնեց ինքնաբացարկ: Չայների մեծամասնությամբ ընտրական հանձնաժողովի քարտուղար ընտրվեց Մարիաննա Եղիազարյանը: Վ. Ասրյանի կողմից առաջարկություն եղավ ավելացնել նաև ընտրական հանձնաժողովի տեղակալի պաշտոնը, որը, բավարար քանակի ձայներ չհավաքելու պատճառով, չհաստատվեց:

Ընդհանուր քննարկման արդյունքում ընտրական հանձնաժողովի առաջիկա նիստը նշանակվեց մայիսի 4-ին, ժամը 17:00-ին, սակայն նշված օրը նախանշված նիստին չներկայացավ Ընտրական հանձնաժողովի անդամ Ամալյա Բալաբեկյանը, ուստի, համաձայն «ՀՄՀ-Հայաստան ծրագրի

Շահառուների խորհրդի և Կառավարման խորհրդի անդամների ընտրությունների» կարգի 2.4 կետի, այն է. «Ընտրական հանձնաժողովի նիստերն իրավագոր են բոլոր անդամների մասնակցության դեպքում», նիստը չկայացավ, այլ տեղի ունեցավ աշխատանքային հանդիպում:

Աշխատանքային հանդիպման ժամանակ ընտրական հանձնաժողովի անդամ Վահագն Ասրյանը հանդես եկավ հայտարարությամբ (հայտարարությունը ներկայացվեց գրավոր)՝ նշելով. «Ես՝ Վահագն Մերուժանի Ասրյանս, շարունակելով մնալ ընտրական հանձնաժողովի անդամ, հրաժարվում եմ դնել իմ ստորագրությունը անդրանիկ նիստի արձանագրության տակ՝ դրանով իսկ չընդունելով արձանագրության մեջ տեղ գտած իրադարձությունների լեգիտիմությունը: Հայտարարում եմ նաև, որ արդարության չվերականգնման դեպքում, մշտապես մասնակցելով նիստերին՝ մշտապես չեմ քվեարկելու և չեմ ստորագրելու արձանագրությունները՝ չապահովելով հարյուր տոկոսանոց մասնակցություն: Միաժամանակ հայտնում եմ, որ հայտարարությանս տակ կարող են ստորագրել ընտրական հանձնաժողովի բոլոր անդամները»: Հայտարարությանը միացավ և ստորագրեց ընտրական հանձնաժողովի անդամ Տիգրան Շահինյանը:


Որպես ՀՄՀ-Հայաստան ծրագրի Շահառուների խորհրդի և Կառավարման խորհրդի քաղաքացիական հասարակության անդամների ընտրության Ընտրական հանձնաժողովի նախագահ և ընտրական հանձնաժողովի քարտուղար՝ ուսումնասիրելով ստեղծված իրավիճակը՝ գտնում ենք, որ մեր վերոհիշյալ գործընկերների, Ընտրական հանձնաժողովի գործունեության բնականոն ընթացքի խոչընդոտմանն ուղղված գործունեությունը միտված է ՀՄՀ-Հայաստան ծրագրի Շահառուների խորհրդի և Կառավարման խորհրդի քաղաքացիական հասարակության անդամների ընտրության բնականոն ընթացքի խոչընդոտմանը:

Հիմք ընդունելով վերոշարադրյալը՝ խնդրում ենք, որպես ՀՄՀ-Հայաստան ծրագրի Շահառուների խորհրդի և Կառավարման խորհրդի քաղաքացիական հասարակության անդամների ընտրության պատասխանատու, ձեռնարկել համապատասխան միջոցներ Ընտրական հանձնաժողովի բնականոն աշխատանքների իրականացումը ապահովելու համար:

Կից ներկայցվում է Վ. Ասրյանի հայտարարության պատճենը:


Հարգանքներով՝

Ընտրական հանձնաժողովի նախագահ՝



Ա. Սարիբեկյան

Ընտրական հանձնաժողովի քարտուղար՝



Մ. Եղիազարյան